## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2011 թվականի թիվ 54 -Ա

### 2011Թ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ <<ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ>> ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ <<ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ >> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2011թ. ՀՀ պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով ՀՀ Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին <<Երեխաների իրավունքների պաշտպանության օր>> միջոցառման կազմակերպման նպատակով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. 2011թ. ՀՀ պետական բյուջեով <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով ՀՀ Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 390.0 հազ. դրամ գումարն ուղղել << Երեխաների իրավունքների պաշտպանության օր >> միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանին << Երեխաների իրավունքների պաշտպանության օր>> միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

26 մայիսի 2011թ.
ք. Իջևան